ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար Ս. Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ Տաջիկստանի Հանրապետություն գործուղման վերաբերյալ

Գործուղվող անձ
Իրավախորհրդատու Մարի Զաքրյան

Երկիր/քաղաք/ժամկետ
Տաջիկստանի Հանրապետություն, ք. Դուշանբե, 2023 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 20-ը:

Հրավիրող կողմ
Եվրոպային անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Տնտեսական և բնապահպանական հարցերով համակարգողի գրասենյակ:

Նպատակը
Մասնակցել Օրհուս կենտրոնների տարեկան հանդիպմանը, ներկայացնել Հայաստանում Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակի որոշման ուղղությամբ տարվող աշխատանքը, քննարկել Օրհուսի կոնվենցիայի իրականացմանն աջակցելու գործում կենտրոնների գործունեության տեսլականը:

Մասնակիցների շրջանակ
Մասնակցում էին Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Բալկանյան երկրներից՝ Ալբանիայի, Սերբիայի, Բոսնիա և Հերցոգովինայի և Հարավային Մակեդոնիայի Օրհուս կենտրոնների կամ բնապահպանության հարցերով նախարարությունների և Օրհուս կենտրոնների աշխատանքին աջակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության, ինչպես նաև Տաջիկստանի նախարարությունների և Բնապահպանական գործակալության, Տաջիկստանում Գերմանիայի դեսպատանատան և Կենտրոնական Ասիայում ոլորտում գործունեություն ծավալող միջազգային կառուցների, ԵԱՀԿ ներկայացուցիչներ:
Հայաստանից մասնակցում էին նաև հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-նախարարի մամուլի քարտուղար Անի Հակոբյանը, Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող Սիլվա Այվազյանը, Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակի

որոշման աշխատանքային խմբի անդամ Լիաննա Ասոյանը, Բիոսոֆիա ՀԿ ղեկավար Գևորգ Պետրոսյանը:

<u>Օրակարգ</u>

Օրակարգում՝

- Օրհուս կենտրոնների դերը շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացում,
- Կանաչ տնտեսության սկզբունքների առաջխաղացում,
- Օրհուս կենտրոնների ներդրումը վտանգավոր և թունավոր թափոնների կառավարման բարելավման գործում,
- Կարողությունների զարգացման դասընթաց՝ էլեկտրոնային հաղորդակցման և տեսանելիության ռազմավարություններ,
- Վերականգնվող էներգետիկան Տաջիկստանում՝ այցելություն Նուրեկ ՀԷԿ:

<u>Ելույթներ</u>

Ելույթ ունեցավ Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող Ս. Այվազյանը: Հայաստանի Օրհուս կենտրոնների օրինակով ներկայացրեց կենտրոնների դերը շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացում, մատնանշեց հատկապես կենտրոնի փորձը կոնվենցիայի իրականացման գործում երիտասարդների ներգրավման գործում, մարտահրավերներն ու հաջողությունները, կենտրոնների վերակտիվացման ուղղությամբ ներկայում տարվող աշխատանքը:

Ելույթի թեման առաջարկել էր հրավիրող կողմը: Տեքստը և ներկայացվող նյութը նախապես համատեղ քննարկել էինք:

<u>Արդյունքներ</u>

Եվս մեկ անգամ ինչպես Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության, այնպես էլ միջոցառման մասնակից բնապահպանական միջազգային կառույցների, Տաջիկստանի Հանրապետության Բնապահպանական գործակալության ղեկավարության կողմից կարևորվեց կենտրոնների դերը Օրհուսի կոնվենցիայի իրականացման գործում:

Ողջունվեց Հայաստանի ջանքերը՝ վերակտիվացնելու կենտրոնների աշխատանքը:

ԵԱՀԿ-ն տրամադրեց հարցաթերթ, որի հիման վրա հնարավոր կլինի բացահայտելու էլեկտրոնային հաղորդակցման և տեսանելիության աշխատանքների կազմակերպման կարողությունները և բացերը, ինչպես նաև աջակցելու՝ ազգային մակարդակում ստեղծելու համապատասխան ռազմավարություն:

<u>Հանդիպումներ</u>

Հանդիպում եմ ունեցել

- ✓ ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական ծրագրերի համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ տիկին Սիլվի Գոյետի,

- ✓ ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական ծրագրերի համակարգման գրասենյակի բնապահպանական կառավարման հարցերով պատասխանատու պարոն Քրիստիան Մելիսի,
- ✓ Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության բնապահպանական տեղեկատվության, արդարադատության մատչելիության ու այլ հարցերի համակարգող Մարինա Յանուշի և
- ✓ Կանաչ աճի համաշխարհային ինստիտուտի (GGGI) ներկայացուցիչ Աիարոն Ռուսելի հետ:

<u>Պայմանավորվածություններ</u>

1. ԵԱՀԿ բնապահպանական ծրագրերի համակարգման գրասենյակի բնապահպանական կառավարման հարցերով պատասխանատու Քրիստիան Մելիսը առանձնազրույցի ժամանակ տեղեկացրեց, որ հավանաբար չեն հասցնի աջակցություն տրամադրել Ազգային զեկույցի պատրաստման նպատակով փորձագետի ներգրավման համար, քանի որ դեռևս հայկական կողմից պաշտոնական նամակ չեն ստացել, իսկ Օրհուս կենտրոնների միջև փորձի փոխանակման և Հայաստանի վերաբերյալ կոնվենցիայի կողմերի VII/8a որոշման կատարման համար ՇՄԱԳՓ օրենքի ենթաօրենսդրական ակտերի մշակման գործում միջազգային փորձագետների ներգրավման հարցը կքննարկեն նամակը ստանալուց հետո:

2. ԵԱՀԿ ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռքբերվեց, որ իրենք նամակով կտեղեկացնեն Օրհուսի կոնվենցիայի իրականացման Ազգային զեկույցի պատրաստմանն աջակցող կառույցների հավաքագրման մասին, որին մենք կարող ենք ներկայացնել Երևանի Օրհուս կենտրոնի տվյալները՝ ի դեմս «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի: Այդուհետ իրենք կարող են որոշակի աջակցություն տրամադրել Հայաստանին՝ Ազգային զեկույցի պատրաստման գործում Օրհուս կենտրոններին ներգրավելու նպատակով:

3. Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցիչ Մ. Յանուշի և Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող Ս. Այվազյանի հետ համատեղ քննարկել ենք Օրհուսի Քլիրինգհաուզում Հայաստանի տվյալների թարմացման անհրաժեշտությունը: Մ. Յանուշը տեղեկացրեց, որ ՊՈԱԿ-ի կայքում Օրհուս կենտրոնին հատկացված էջը բավարարում է պայմաններին և որպես կոնվենցիայի իրականացման հարցերով ազգային էլեկտրոնային ռեսուրս կարող է նշվել այդ էջի հղումը, որը նախապես էլ.փոստով Օրհուս կենտրոնը տրամադրել է իրենց: Տիկին Յանուշը նաև ողջունեց Հայաստանում շրջակա միջավայրին առնչվող տեղեկության էլեկտրոնային հարթակների միջոցով հասանելիության ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքը: Տեղեկացրեց, որ ցանկանում են, որ այս մասին առավել մանրամասն

ներկայացվի Կոնվենցիայի աշխատանքային խմբի առաջիկա հանդիպմանը, որի համար կոնվենցիայի քարտուղարությունը դիմել է ԵԱՀԿ-ին՝ ներկայացնելով հանդիպմանը տիկին Այվազյանի մասնակցության թեկնածությունը:

4. Կանաչ աճի համաշխարհային ինստիտուտի ներկայացուցիչ Աիարոն Ռուսելի հետ, քննարկել եմ կանաչ աճի ինդեքսի ձևավորման մեթոդաբանությունն ու Հայաստանի Հանրապետության ինդեքսը, ինչպես նաև ՀՀ դիրքերը սանդղակում բարձրացնելու հնարավորությունները:

Այնուհետև, առավել մանրամասն հասկանալու համար համագործակցության հնարավորություններն ու փոխադարձ պարտավորությունները, պարոն Ռասելի հետ հանդիպում ենք ունեցել Ա. Հակոբյանի հետ միասին, քնարկել կառույցին ՀՀ անդամության պայմանները: Առաջարկվել է, հետաքրքրության դեպքում էլ.փոստով տեղեկացնել և կառուցի ղեկավար մարմնի ներկայացուցչների հետ հանդիպում կազմակերպել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի
Կողմերի 28-րդ համաժողովի (COP28) շրջանակում:

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու՝
Մարի Չաքրյան

25.10.2023